



Տարեկան գինը 10 ռուբլի. կէս տարվան 6 ռուբլի.
Առանձին համարները 5 կոպէկով.

Թիֆլիսում գրվում են միայն խմբագրատան մէջ.

Մեր հասցէն. Тифлисъ, Редакция «Мшакъ».
Կամ Tiflis, Rédaction «Mschak».
Տ է լ է Ֆ օ Ն № 253.

Մտարարութիւնը լայն է առաւօտեան 10—2 ժամ
(լայն կիրակի եւ տօն օրերից).

Յայտարարութիւնը ընդունվում է ամէն լեզուով.

Յայտարարութիւնների համար վճարում են
խրաքանչիւր բառին 2 կոպէկ.
Տ է լ է Ֆ օ Ն № 253.

ՀԻՄՆԱԳԻՐ ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Օգնութեան մի նոր ձեւ.—ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Անդամաձգելի կարիքներ. Նամակ կարգի. Նամակ Մեղրից. Նամակ Մեծ-Կարաքիլիսայից. Ներքին լուրեր.—ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Ձիւնական գործերը. Արտաքին լուրեր.—ՀԵՌԱԳԻՐՆԵՐ.—ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ.—ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ. Հայկական տպագրութիւն.

ՕԳՆՈՒԹԵԱՆ ՄԻ ՆՈՐ ՁԵՒ

Այն ժամանակ, երբ ծրագրվում էին Ախալքալաքի գաւառի երկրաշարժից վերանաշինելու օգնելու եղանակները, որոշվեց, ինչպէս յայտնի է, տալ նրանց լծկան եղանակը եւ կիսան կովերը: Մի յատուկ յանձնաժողով գրադրւած էր անասուններ գնելու եւ նրանց բաժանելու: Եղանակ տրվեցին այն փնտրելու ընտանիքներին, որոնք համեմատաբար աղքատ են եւ բացի դրանից այն ընտանիքներին, որոնք երկրաշարժից առաջ էլ ամենեւին եղ չեն ունեցել եւ որոնց անտեսութիւնը խանգարւած էր լծկան կենդանիների բացակայութեան պատճառով:

Գիւղացիներին օգնելու այդ ձեւը ներկայ դէպքում միայն մի պատահական երեւոյթ էր, որ անմիջական կապ չուներ երկրաշարժի աղէտի հետ: Նա նպատակաւորաբար ձանաչվեց այդ դէպքում այն պատճառով, որ գիւղացիների եղ չունենալը պէտք է ստիպեր կոմիտեան հոգ տանել տների շինութեան համար նիւթեր փոխադրելու մասին եւ այդ նպատակով վարձել կենդանիները: Աւելի ձեռնառու համարվեց այդ գործը յանձնել գիւղացիներին իրանց, տալով նրանց լծկան անասուններ:

Սակայն գիւղացիներին արած օգնութեան այդ ձեւը ինքն ըստ ինքեան լաւ ձեւ է եւ արժանի ծառայելու իբրեւ. օրինակ ուրիշ դէպքերում: Գիւղացիները շատ անգամ կորցնում են տնային կենդանիներն:

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ՀԱՅԿԱԿԱՆ ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ

Այսպիսի գրութեան մէջ լիւօրնոցի հայերի համար ձեռնառն չէր օգնել էջմիածնից եկած վարդապետին, որպէս զի նա Աստուածաշունչ ապագրել, այն էլ մի բողոքական երկրում, որ հերձուածող Հայաստանից աւելի ատելի էր պապական արքունիքին: Երեւի այդ անյարմարութիւնը վերացնելու պատճառով էր, որ Ոսկանը գնաց Հոգւոյ Բայց ինչ ընդունելութիւն կարող էր գտնել այդտեղ: Կաթօլիկ կղերականները Ոսկանին համարում էին կաթօլիկ *) երեւի այն պատճառով, որ նա Պողոս Պիրոսովի հետ թարգմանութիւններ էր արել եւ նրա մտերմին էր: Հասկանալի է, թէ որպիսի հիասթափում պիտի առաջացրած լինի նա Հոգւոյ, քանի որ գործում էր իբրեւ էջմիածնի մարաւ: Ձեռնառնային միակողմ աղօթող, նա նորից վերադառնում է Լիւօրնոց եւ այս անգամ կարողանում է գտնել երեք ջուղացիների վաճառականներ, որոնք յանձն են առնում հրատարակել Աստուածաշունչը եւ օտանալի արդիւնքը լատկայնում են էջմիածնին, Երուսաղէմի եւ Ս. Սարգիս վանքերին: Այնուհետեւ Ոսկանը ուղևորվում է Հոլանդիա, ուր եւ սկսում է իր արդիւնաւոր գործունէութիւնը:

Տեղ հասնելուն պէս նա շտապում է նախ եւ առաջ գրագիտութեան ամենամանրամասն ձեռնարկը—Այբբենարան հրատարակել, վերջացնում է Կարապետ վարդապետի սկսած Շարականը եւ ապա ձեռք է առնում Աստուածաշունչի տպագրութիւնը, մի արդարեւ մեծ գործ, *) Վերին միութիւն, եր. 45:

րին՝ վարակիչ հիւանդութիւնների, խոտի եւ հացի տնտեսութեան կամ ուրիշ գիւղական զօրազրուութիւնների ժամանակ: Եթէ նրանք կարողանային իսկոյն ձեռք բերել կորցրած կենդանիներին, նրանց տնտեսութիւնը չէր խախտվի եւ առաջ կը դնար իր նախկին ձեւով. բայց յաճախ անկարելի է լինում իսկոյն գտնաբերել ձեռք գցել եւ անասուններ գնել, ուստի տնտեսութիւնը խանգարվում է եւ յետոյ դժուարութեամբ է վերականգնվում:

Ռուսաստանի գաւառական ինքնավարութիւններից մի քանիսը, օրինակ Պերմի նահանգի գաւառական զեմստովոները, ահա տան տարի է, որ փորձում են օգնել գիւղացիներին՝ տնային կենդանիներ տալով այն ընտանիքներին, որոնք ֆինացել են առանց գրաստի: Օգնութեան փորձը տալիս է աջող հետեւանքներ: Գիւղացիները կարողութիւն են ստանում շարունակելու իրանց տնտեսութիւնը եւ մի քանի տարվայ ընթացքում վճարելով կենդանիների գինը, ազատվում են աղէտների հասցրած ֆինանսերից:

Շատ ցանկալի է, որ Ախալքալաքի երկրաշարժի աղիթով գործ դրված օգնութեան այդ ձեւը ընդհանրապես մեզանում բոլոր այն դէպքերի ժամանակ, երբ գիւղացիները կորցնում են իրանց բախուոր գրաստներին եւ այդ պատճառով քայքայվում իրանց տնտեսութիւնը:

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ԱՆՅԵՏԱԶԳԵԼԻ ԿԱՐԻՔՆԵՐ

Մինչեւ երեկոյն լաց չէ լինի՝
Մալը ծիծ չի տալ
Ժողովրդ, առած

Նաւթարդիւնաբերողների ժողովը լինելու է առաջիկայ նոյեմբերին եւ այնուհետեւ ամեն տարի ժողովները պիտի կայանան այդ ամսին, փոխանակ մայիս ամսի, որ անյարմար է համարվում: Ուրեմն ձեռք է այն ժամանակը, երբ

որ, ինչպէս տեսանք, վաղուց ի վեր պահանջ էր դարձել ազգի մէջ եւ շատերի տենչանքն էր, բայց ֆինացել էր երազ: Այստեղ կարիք չը կայ մի առ մի բացատրելու, թէ ինչ դժուարութիւններ էր ներկայացնում առաջին անգամ Աստուածաշունչ տպագրելը: Ոսկանը երկար ժամանակ աշխատանք էր թափել նրա վրա ոչ միայն իբրեւ տպագրող, այլ եւ իբրեւ խմբագրող: Նա համեմատել է հայերէն Աստուածաշունչը լատիներէնի հետ, տեսնել է լատիներէնի համաձայն, կազմել բոլոր յատուկ անունների մի շատ մանրամասն ցանկը, նոյն իսկ նրա մի մասը (Սիրաքի գիրքը) նորից թարգմանել է տուել Ստեփանոս Լեհացուն, որ էջմիածնի զարգացած միտքաներից մէկն էր: Գրքի վերջում Ոսկանը գետեղեց մի քանի կտոր թարգմանութիւններ: Եւ հերոսիմոսից, որոնք, երեւի, իր գործն էին: Աւելացրեց այդ բոլորի վրա անսխալ, պատկերազարդ տպագրութիւնը, եւ դուք մի հասկացողութիւն կը կազմէք Ոսկանի կատարած գործի մասին: Տպագրական մամուլը առաջին անգամն էր լոյս հանում այն փաստը, որ հայն էլ ընդունակ է երկար ու զգաւոր աշխատութիւններով խոշոր հրատարակութիւններ անել: Պակասութիւնը միայն այն էր, որ Ոսկանը չը կարողացաւ իր լատինաբանութիւններին եւ անհարգաւ ձեւերից ազատել իր թարգմանութիւններն ու բացատրութիւնները: Սիրաքի նոր թարգմանած գիրքն էլ կրում էր լատինաբանների բոլոր նորմութիւնները:

Հայերէն Աստուածաշունչը տպագրվեց երկու տարվայ ընթացքում. նա մտաւ մամուլի տակ 1666-ին եւ դուրս եկաւ 1668-ին: Ի նկատի ունենալով այն ժամանակվայ տպագրական գործի դրութիւնը, բայց մանաւանդ այն համազմանքները, որոնց մէջ գործում էր Ոսկանը օտար հողի վրա, մենք չենք կարող չը դարձնալ այդ արագութեամբ վրա: էջմիածնի ա-

նորից սկսվելու են քննվել նաւթարդիւնաբերութեան շուրջը պտտող հարցերը: Կան խնդիրներ, որոնց մասին նաւթարդիւնաբերողները չեն սիրում մտածել եւ երբեք էլ չեն մտածի, մինչեւ իրանց չառաքարկեն, չը խնդրեն եւ այն: Այդ կողմից մեր ժամուրդ մի որոշ դեր ունի կատարելու, եւ մենք աւելորդ չենք համարում յիշեցնել մի քանիսը այդ խնդիրներից, որոնք վերաբերում են աշխատանքի դասին, խնդիրներ, որոնք կենսական նշանակութիւն ունեն այդ դասի համար:

Ճիշդ է, նաւթային արդիւնաբերութիւնը դեռ նոր է, բայց, բազմիցս բերմամբ, շատ կարճ ժամանակում նա այնպիսի ահուկ չափեր ըստացաւ, որ բնական պէտք է համարել այն կարելու խնդիրները, որոնք ինքն ըստ ինքեան բնական են այդպիսի դրութիւնից:

Իւրաքանչիւր ծառայող իր հեռուոր ապագայում ունի մի ցանկալի հեռանկար—հանգստեան թոշակ: Մինչ դեռ ամեն տեղ, ամեն հիմնարկութեան մէջ ծառայելու մի բնական, շատերի համար գուարճալի եւ ցանկալի բան է, Բագում եւ հանգստում ու գործարաններում մանաւանդ, նա շատ անբնական պայմաններում է գտնվում: Այդտեղ ծառայելու մի որոշ չափով զոհողութիւն է նոյն իսկ: Բոլորովին մտադիր չենք մի աւելորդ անգամ եւս պատկերացնել այստեղ գրաստների ծառայողների եւ գործակատաների դրութիւնը: Ժամանակի ընթացքում թէ մեր եւ թէ ուրիշ թղթակցութիւնները բաւականաչափ պարզել են այդ կամուրդ տաճանակի աշխատանքի դասն կողմերը: Հրապարակի վրա մի իրողութիւն կայ միայն. այստեղի ծառայողը չը գիտէ, թէ ինչ է լինելու վաղը եւ թէ ինչ վարձատրութիւն կարող է ստանալ իր մահվան կամ հիւանդութեան դէպքում ինքը կամ ծնողները, ժառանգները: Այս է նա կարեւոր խնդիրը, որը հրապարակի վրայից չը պէտք է վերցնել, մինչեւ որ մի բաւարար լուծում չը ստանայ:

Ամենակարճ ժամանակում նաւթային գործը տուել է մի սերունդ, որ իրաւունք ունի այդ հարցը տալու: Միայն նաւթային աշխարհումն

ունեն կրող տպարանից դուրս եկած Աստուածաշունչը կարելի էր համարել էջմիածնի հրատարակութիւն. եւ մինչեւ այսօր էջմիածնից չը կարողացաւ գտնէ մի անգամ էլ կրկին այդ հրատարակութիւնը:

Ամտարդաձեւում Ոսկանը մնաց չորս տարի, մինչեւ 1670 թւականը եւ այդ ժամանակամիջոցում տպագրեց 17 գիրք, հաշվելով այդ թիւի մէջ թէ այն կիսատ Շարականը, որ նա ընդունեց Կարապետ վարդապետից ու վերջացրեց եւ թէ այն Շարականը, որ նա ինքը սկսեց, բայց կիսատ թողնելով հեռացաւ: Հոլանդիայից, ուրիշներից թողնելով տպագրութիւնը վերջացնելը: Տարին միջին թուով 4 գիրք, հրատարակված մի եւ նոյն տպարանից, մի եւ նոյն անձի ձեռքով—զա դեռ չենք երեւոյթ էր: Բայց Ոսկանի գործունէութիւնը մի նշանաւոր նորութիւն էր նաեւ հրատարակած գրքերի բովանդակութեան եւ արժանիքի կողմից:

Ամենից շատ, ի հարկէ, եկեղեցական գրքերի պակասութիւնն էր երեւում վարդապետի աչքին եւ ամենից շատ էլ աշխատանք պիտի գործադրվէր այդ պակասութիւնը լրացնելու համար: Ոսկանը հրատարակեց Սաղմոս, Ժամուրդ, առաջին անգամ տպագրեց Մատթոյ, Նոր Կտակարանը: Բայց դրա հետ միասին տպարանը նրա ձեռքի տակ սկսեց ժամանակակից գրողներին էլ ծառայել: Այսպէս, 1666-ին նա տպագրեց իր թարգմանած եւ խմբագրած «Քերականութիւնը», իսկ 1669-ին հրատարակեց XVII դարի ամենալաւ հեղինակութիւնը—Առաքել վարդապետ Դավրիթեցու «Պատմագրութիւնը»: Առաքելը առաջին անգամ հայ հեղինակն էր, որ իր կենդանութեան ժամանակ տեսաւ իր գործը տպագրված: Մի եւ նոյն ժամանակ

*) Առաքել վարդապետը 1670 թվին, տ. նրա պատմագրութեան էջմիածնի երկրորդ հրատարակ, 1896, առաջարկ, եր. 2:

է, որ երեկ առողջ երեւացող ծառայողը յանկարծ այսօր արիւն է թքում եւ վաղը գերեզման իջնում. նա ժամանակ չէ ունենում նոյն իսկ տուն գնալու՝ ծնողների մօտ—այնտեղ հանգչելու յաւիտենականութեան ծոցում կամ նրանց իր մօտ բերել տալու, որ իր փրկեցեալների գրկում հրաժեշտ տայ աշխարհին եւ իր վերջին իղձը նրանց կտակէ... Այժմ երեւակայեցէք այդպիսի ծառայողի աշխատանքով ապրող մօր, եղբոր, քոյրերի, կնոջ ու զաւակների դրութիւնը: Նրանք զրկվել են իրանց գոյութեանը անուշոյ տուողից... Անխուստիկ է բարոյական կորուստը, բայց պէտք չէ միթէ ծածկել գոնէ նիւթական կորուստը:

Ահա այս հարցն ենք դնում հրապարակի վրա. խնդիրն այնքան պարզ է եւ բոլորի համար հասկանալի, որ երկար ու բարակ խօսելու կարիք չը կայ: Անբաւարար է ծառայողի ուժի կ, անորոշ նրա ապագան: Մի քանի նախապաշարաստական ժամանակը ժողովները եւ խորհրդածութիւնները կը ձեւակերպէին խնդիրը եւ ժողովի պարագայունքների շարքը կը մտցնէին:

Մենք լիառոյս ենք, որ այս ամենատարաւան գաղափարը նաւթարդիւնաբերողների սըրտում շուտ արձագանք կը գտնի եւ նրանք մի համեմատ միութարութիւն չեն զանալ իրանց՝ մեր ջիւնի համբերութեամբ եւ տոկունութեամբ ներշնչված աշխատանքներին, որոնք միշտ ժամանակից շուտ գերեզման են իջնում: Ունենալ մի հաստատուն յոյս, թէ ընտանիքը գէթ ամենահամեմատ կերպով նիւթակտն ապահովված կը լինի—այս է մեր, կենդանի մտապահներին պահանջը: Նոյն պահանջն է լուծում եւ այն գերեզմաններից, որոնք գեռ շատ թարմ են:

Բա գու.

ՆԱՄԱԿ ԿԱՐՍԻԾ

Գուրգուսեան Հայոց Բարեգործական Ընկերութեան Կարսի ճիւղը փակվելուց յետոյ՝ նրա, ի յիշատակ Նոյա Կայսերական Մեծութիւնների

զա առաջին տպագրած գիրքն էր, որ խօսում էր ժամանակակից կեանքի մասին, դուրս էր բերում դեռ կենդանի գործիչների պատկերները: Դա առաջին հայերէն գիրքն էր, որ թշնամական կրքեր յարուցեց, հալածվեց: Երբ Առաքելը պատմագրութիւնը ուղարկվեց Լեհաստան՝ վաճառելու համար, Գալաթոսի արժանաւոր յայտը հ. Ալոյսիոս Պիտու շտապեց կաթօլիկական արգելքի թաթը դնել այդ գրքի վրա, որովհետեւ նրա մէջ նկարված էին Նիկիոյ եւ Լեհաստանի եղուիտների դէմքերը: Հետաքրքրականն այն է, որ այդ լատին կրօնաւորը իր գրած պատմութեան մէջ չէ ինչպիսիք Նիկիոյի, տալով նրան չափաւոր, փառասէր եւ անպէտք մի մարդու կերպարանք, իսկ երբ Լիւօլի դատաւորները հարցրին թէ ինչու է արգելվում Դավրիթեցու գիրքը, նա մոտաւ նոյն այդ Նիկիոյի փէչերի տակ եւ պատասխանեց թէ ինքը, վրինելով առաքելութեան ծառայ, չէ կարող հաւանութիւն տալ, որ վաճառվեն ու առաքածվեն այնպիսի գրքեր, որոնք մէջ անարգված է իրանց հովիւը: *)

Սա, ինչ ասել կուզի, կեղծաւոր մի պատուական էր միայն: Լեհաստանի հայերին ընդի կաթօլիկացիները ամեն կերպ աշխատում էին, որ «Երեւոյթիտ» հայերը ոչինչ յարաբերութիւն չունենան նրանց հետ եւ երկրից դուրս էին վաճառում ամեն մէկին, որ աւանդապահութիւն ու ազգապիտութիւն էր ցոյց տալիս: Այդ բոլոր նաւորներին ստատիկ կատարեցնում էր մանաւանդ Ամտարդաւոր տպարանը, որ համարձակում էր հերետիկոսական գրքեր տպագրել եւ այդ պատճառով արգելված էին այդտեղի բոլոր գրքերն առհասարակ: Ոսկան վարդապետի անուան պատիւ էր բերում այն, որ նա վաւրակված չէր կաթօլիկ կղերի այդ ֆանատիկոսութեամբ: Ընդհակառակն, այնքան լայն սրտի

*) Վերին միութիւն, եր. 215:

...*... (illegible) ...*

պատրաստում է գործընկերներ մեծաքանակ գործունեություն համար, կամային-կամային արձակում է իր բանուղիներին: Նոյն երեւոյթը նկատուի մի Ժրանսիայի, Իտալիայի եւ Շվեյցարիայի մետաքսային արդիւնաբերութեան մէջ:

Այլիք առաջ ունենալով այն հանգամանքը, որ երկաթուղով ճանապարհորդող անձինք չստանան չը գիտեն ինչնու տեղերը եւ այդ պատճառով բաց են թողնում կայարանները եւ մնում են վազոններում, հաղորդակցութեան ճանապարհները միմիկայութեամբ հրամայել է, որ կողմնակցութեամբ ոչ միայն յայտնեն կայարանները անունները բարձր ձայնով, այլ եւ նոյնը յայտնեն վազոններում, մանաւանդ երբորդ կարգի ճանապարհորդներին:

«Մշակի» № 103-ի մէջ տպւած էր յայտարարութիւն մի պարոնի մասին, որ գտնուում է հիւանդ գրութեան մէջ եւ որ գրկված լինելով նիւթական միջոցներից՝ դիմում էր հասարակական օգնութեան: Այդ յայտարարութեան աւելի մեծ ստացանք օգնութեան կարօտ անձի մի ազգականից նամակ, որով նա յայտնում է իր պատրաստակամութիւնը օգնելու հիւանդ պարոնին: Մենք յաւուս ենք, որ այդ հարկը չը վերջացաւ եւ օգնութեան գործը չը կազմակերպվեց: Հիւանդ պարոնը, նորից դիմելով մեզ, խնդրում է յայտնել, որ նա օգնութիւն միջնէլ այժմ չէ ստացել, իսկ նրան խոստացած գումարը անբաւարար է հոգւում մինչեւ այժմ արած եւ հիւանդանոց տեղափոխվելու համար անհրաժեշտ ծախսերը: Պարոնի գրութիւնը ողբալի է: Ուստի յայտնալի է, որ օգնութիւն խոստացողները հասցնեն իրանց նպատակները:

ՇՈՒՇՈՒՅԹ մեզ գրում են. «Նորքնտիր հողաբարձուներից մի երկուսը, դեռ չը հաստատված եւ առանց միւս ընկերների խորհրդակցութեան, վտանգ լինելով իրանց հեղինակութեան վրա, հեռագրով դիմել են երեք անձանց տեղափոխելու համար—Մ. Արեւելանին, Մ. Բերբերեանին եւ Եղնիկ վարդապետին: Եւ դեռ այդ հողաբարձուները աշխատում են հաւատացնել, որ իրանք կուսակցական մարդիկ չեն:

ԵՐԵՒԱՆԻՅԹ մեզ գրում են. «Յուլիսի 30-ին, Պոլսո-Պետրոս եկեղեցում բաւական ժողովրդի ներկայութեամբ կատարվեց երկրորդ հոգեհանգիստ Գրիգոր Զանգեանի յիշատակին: Հոգեհանգիստին ներկայ էր առաջնորդը, որը խօսեց հանգուցեալի արժանատիութեան մասին: Դիմադրելի վրա դրված էր թարմ ծաղիկներից մի պսակ հետեւեալ մակագրութեամբ. «Անփոխարինելի Գրիգոր Զանգեանին՝ Երեւանի հայ ժողովրդից 1900 թ. 17 յուլիսի: Բացի այս, ժողովրդած է 100 ռուբլու չափ մի գումար՝ Զանգեանի անունն մի որդեգիր պահելու թեմական դպրոցի մէջ»:

ԱՍՏԻՍԱՆԻՅԹ մեզ գրում են. «Յուլիսի 23-ին այստեղի մայր եկեղեցում հոգեհանգիստ կատարվեց Գրիգոր Զանգեանի յիշատակին: Մկրտուման քահանայի գեղեցիկ կերպով պատմարարեց հանգուցեալի կենսւոյը եւ գործունէութիւնը: Այստեղի հայ հասարակութեան կողմից հեռագրված է արծաթէ պսակ դնելու հանգուցեալի դագաղի վրա: Յարգանքի այդ սպասցոյցից յետոյ պէտք է հանգանակութիւն բացվի աւելի օգտաւէտ կերպով յաւերժանելու մեր տաղանդաւոր հայրենակցի անունը: Յուանք, որ հայ դրամատէրը լայն բաց կան իր քաղաք այդ քանի համար, միացնելով գործը խօսքի հետ: Մեր առաջնորդ Սեդրակեան արեւելիկոյութեան գնացել է բժշկութեան համար Օդեսսա եւ նրա բացակայութեանը դեպքի է այս հարցում: Սակայն յոյս ունենք, որ վերադառնալուց յետոյ կը ձեռնարկէ այս գործին»:

ՇՈՒՇՈՒՅԹ մեզ գրում են. «Յուլիսի 30-ին, Ղազանցեցոց եկեղեցում, ի յիշատակ անխնայ վատարակութեան Գրիգոր Զանգեանի, հոգեհանգիստ կատարվեց, որի նախաձեռնողն էր երէցիկը Մ. Սեդրակեան, չը նայած այն խոչնդոտներին, որ նա հանդիպեց տղէտ կոմսիտորիականներից: Եւ կեղեցին լինէր էր յարգողներով. պատարագին երգում էր օրիորդական խումբը. պ. Ժամատեան մի թարմ ծաղիկայ պսակ դրեց, իսկ ուսանող Առատամեանց մի աղբու ճառ խօսեց»:

ԵՐԵՒԱՆԻՅԹ մեզ գրում են. «Յուլիսի 27-ի երկուշաբթի, Երեւանի չըջակալքում տեղաց կարկառաւոր կատաղի անձերը, բարձրացաւ չը տեսնված քամի, որ քանդեց մի քանի թիթեղեայ տանիքներ, արմատախիլ արեց բազմա

մաթիւ ծառեր. հեղեղը բցվեց մի քանի տներ. ինչպէս լեցինք մի տուն էլ քանդվել է, բայց մարդկային զոհեր չը կան»:

ԼԱՅՈՒՆԻՅԹ մեզ գրում են. «Կիրակի օրը, յուլիսի 30-ին, պատարագից յետոյ Ղազաղէի մի քանի երիտասարդների նախաձեռնութեամբ տեղիս հայոց եկեղեցում հոգեհանգիստ կատարվեց վաղաժամ վախճանված Գրիգոր Զանգեանի մահվան ամիսով: Հոգեհանգիստին ներկայ էր Ղազաղէի հայ հասարակութիւնը»:

ԼԱՅՈՒՆԻՅԹ մեզ գրում են. «Անդրհատ տեղացող անձրեւները, քամին եւ թանձր մառախուղը փչալորին սիմֆոնիա, որ հասնելու վրա է: Վրացի գեղջուկը, որի ապրուստի միակ միջոցը սիմֆոնիան է, համարեա լայն է լինում: Այժմ սիմֆոնիայի գինը 50 կոպէկ է պուղը: Առհասարակ այստեղից բաւական մեծ քանակութեամբ սիմֆոնիայ է արտահանվում արտասահման: Արտահանողները մի քանի վաճառականներ են, որոնք սիմֆոնիայի գինը կը գրավում: Անձրեւները վառանքին նոյնպէս եւ մետաքսի բոժոժներին, որոնք սկսեցին բորբոսել: Ինչպէս յայտնի է, վաճառականները մայիսից սկսած բոժոժը հաւաքում են եւ երեք ամսվայ չափ այստեղ պահում են չորացնելու եւ շուկելու համար, եւ յետոյ ուղարկում արտասահման: Աւելի չափ վաճառողները նրանք են, որոնց պահեստները լաւ չեն յարմարեցրած: Եղանակները սկսում են լաւանալ»:

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՁԻՆԱԿԱՆ ԳՈՐԾԵՐԸ

Ինքնին «Localanzeiger» լրագրում տպագրված է մի հետաքրքրական interview-ի բովանդակութիւն, որ այդ լրագրի Կանտոնի թղթաւիկից ունեցել է Լի-Սունգ-Չանգի հետ՝ նրա Շանգհայ գնալուց առաջ: Թէպէտեւ խօսակցութիւնը տեղի է ունեցել յուլիսի 5-ին, բայց եւ այնպէս նա չէ կորցրել իր հետաքրքրականութիւնը եւ այսօր, որպէս, գուցէ, ուղիղ բացատրութիւն այն պատճառների, որոնցից առաջացան այժմեան ցաւալի անցքերը Չինաստանում: Լի-Սունգ-Չանգ, խօսելով բուռնցքաւոր մարտերի մասին, ասում էր, թէ այդ ժողովրդական շարժումը գլխաւորապէս ուղղված է չինացի բրիտանականների դէմ, որոնց վրա պետութիւնները նայում են այլ աչքով, քան միւս չինացիների վրա եւ որոնց աշխատում են զանազան միջոցներից, տալով բրիտանականներին անտեսական եւ քաղաքական արտօնութիւններ: Ապա նա շարունակեց.

«Եւ խորին կերպով համոզված եմ, որ քաղաքացիները միշտ վստահուած են եղել են եւ կը լինեն այն յարաբերութիւնների տեսակէտից, որ չինական ազգաբնակչութիւնն ունի օտարազգիների հետ եւ որ նրանք եղել են եւ կը մնան պատճառ բոլոր յուզումներների եւ խռովութիւնների: Յետոյ Լի-Սունգ-Չանգ բացատրեց, թէ չինական ազգաբնակչութեան հետ զգնեալ աճող դաշտով օտարերկրացիների դէմ գրգռել են վերջին տարիների ընթացքում իրանք պետութիւնները: «Որպէս օրինակ, եւ կը յիշեմ Կիաո-Չաուի գրաւումը Գերմանիայից: Սպանված էին մի զոյգ քաղաքացիներ, եւ երբ բաւարարութիւն պահանջվեց այդ սպանութիւնների համար, չինական կառավարութիւնը խափա պատժեց յանցաւորներին եւ պատահականաւ աստիճանաւորներին: Նա առաջարկեց նմանապէս վճարել խոչը գրաւական տուգանք, սակայն այս բոլորը համարվեց անբաւարար: Գերմանիան պնդեց եւ ստացաւ մեր հայրենիքի մի թանգազին կտորը... Դա մի չափաւոր տուգանք էր մի զոյգ քաղաքացիների համար. բայց Կիաո-Չաուի բազմաթիւ օրինակներից մէկն է միայն: Միւս պետութիւնները հետեւեցին նրա օրինակին եւ նրանց գործունէութեան այս եղանակը գրգռեց ազգաբնակչութեան մեծամասնութեան զայրոյթը եւ նոյն իսկ այնպիսի չըջաններին, որոնք ընդհանրապէս արեւելեամբար էին վերաբերվում դէպի օտարազգիներ: Չինաստանը ոչ մի դէպքում այլ եւս երկիրներ չը պիտի զիջան ուրիշներին: Լի-Սունգ-Չանգ ցաւակցեց թիւն յայտնեց գերմանական դեսպան Կետտելերի սպանման ամիսով աշխատելով պրինց Տուանի վրայի վերջին այդ յանցանքի պատահականաւ տուութիւնը: Նա ապա երկու յայտնեց, որ չը լինի զորքութիւնների մէջ արագ եւ եռանդաւոր Վիլհելմ կայսրը պատերազմ յայտնէ Չինաստանին: Կառավարութիւնը—խոստովանեց Լի—չափ թոյլ է եւ անկարող է եռանդով մաքառել բուռնցքաւորներին դէմ: Եւս

պարտում եմ—նկատեց նա—պրինց Տուանին, այրի կայսրուհուն եւ չինական ամբողջ կառավարութիւնը երանդի այդ պախաւորեալ համար: Երբեք հարկաւոր չէր թոյլ տալ, որ բանն այդտեղ հասնի: Ես չափ ծանօթ եմ հիւսիսային Չինաստանի հետ եւ համոզված եմ, որ եթէ ես այնտեղ լինէի, այդ անմիա յարձակումները օտարազգիների դէմ տեղի չէին ունենայ»:

Երբ թղթակիցը հարց առաջարկեց, թէ ով է կատարում այժմ Պեկինում, Լի պատասխանեց. «Պրինց Տուանը կայսրի անունով: Այսու ամենայն»՝ չինական Բիւնարկը՝ պարզ եւ որոշ ելք այժմեան անիշխանական գրութիւնից ցոյց տալ չը կարողացաւ:

«Daily Mail» լրագրի Շանգհայի թղթակիցը հաղորդում է, իբրեւ լուր, թէ բուռնցքաւորները գործակալը սպանեց Շանգհայի նահանգապետ Իւանչիկային, որ ամենաազգեցիկ անձերից մէկն է այժմեան Չինաստանում:

Նոյն լրագրին հաղորդում են Շանգհայից, թէ Լիպինգի, չինական զորքերի նոր նշանակված գլխաւոր հրամանատարը, Պեկին գալուց անմիջապէս յետոյ, այրի կայսրուհուն ներկայացրած մի յայտարարութեամբ՝ առաջարկեց կայսր հրատարակել Պրինց Տուանի որդուն եւ անխնայ մահվան պատժի ենթարկել այն բոլոր անձերին, որոնք սպառնալիք կը հանդիսանան խաղաղութեան եւ օտարերկրացիներին:

ԱՐՏԱՔԻՆ ԼՈՒՐԵՐ

Հոսից հաղորդում են «Berliner Tageblatt» լրագրին, թէ հանգուցեալ Ումբերտո թագաւորի մարմինը տեղափոխելու ժամանակ, դժբաղդաբար, երկու ցաւալի միջնադէպքեր պատահեցին: Ազգային բանկից ոչ հեռու փուլ եկաւ մի բարձր տախտակամած, որ շինված էր ժողովրդի համար եւ սարսափ տարածեց անձեր վրա: Աւելի եւս լուր՝ դէպք տեղի ունեցաւ Via Nazionale թաղոնի մօտ: Ումբերտո թագաւորի ձին, որին տանում էին զաւադի ետեւից, խրանցի ժողովուրդը վախեցաւ եւ մի կողմ վազելով՝ քիչ մնաց տանէր իր հետ եւ վիկտոր-էմանուէլ II-ին: Այդ ժամանակ Առաջի դռը, Տուրինի կոմսը եւ օֆիցերները մօտ վազեցին եւ արբը մերկացնելով չըջապատեցին թագաւորին: Երբ թագաւոր ժամանակ չափերը ոտի տակ ընկաւ եւ ստացան թէ ծանր եւ թէ թեթեւ վէրքեր: Երբ արբը վաճառեց թիւը հասնում է 90-ի: Երբ յուզարկաւորեան ժամանակից ամբողջ դրօշակներ նկատեց Պրատորի, Բիւնարի ծննդավայրում, նա պատահական դրօշակներ՝ աղաղակելով «PEREAT»:

Բէլգիայի չորս մեծ քաղաքների քաղաքապետները նախաձեռնութեամբ կազմակերպվում է կամաւորների մի զօրաբաժին Չինաստան ուղարկելու համար: Այդ նպատակով բացված է ստորագրութիւն եւ ժողոված գումարի քանակութիւնը այժմ հասնում է արդէն 3 միլիոն ֆրանկի: Զօրաբաժին կազմակերպութեան համար ընտրված յանձնաժողովի մէջ մասնակցում է եւ յայտնի բէլգիական ինժեներ՝ գեներալ Բիւրպոն: Բէլգիական կառավարութիւնը չէ խառնվում այդ գործին, որովհետեւ, նրա կարծիքով, Բէլգիան, իբրեւ չէզոք պետութիւն, իրաւունք չունի գերմանական արշաւանք կազմակերպել: Եւ յիշատի, չը նախելով Լէօպոլդ թագաւորի ցանկութեան 1860 թ. Բէլգիան հրաժարվեց անմասնակցութեանը: Փրանսիական արշաւանքին դէպի Չինաստան, Բայց 1864 թ. Բէլգիական մի զօրաբաժին, որ կազմակերպված էր բէլգիական զօրքի կամաւորներից, մասնակցեց Մէկոնկայի արշաւանքին: Այդ բանի դէմ եւրօպական ոչ մի պետութիւն բողոք չը բարձրացրեց, որովհետեւ, իսկապէս ասած, Բէլգիայի չէզոք դրութիւնը վերաբերում է միայն եւրօպական պետութիւնների միջազգային յարաբերութիւններին եւ ի նկատի չունի ուրիշ ցամաքներ, բայց Եւրօպայից: Մեկոնկայի արշաւանքին Բէլգիան մասնակցեց նրա համար, որ մեկուկական կայսրուհին (Մաքսիմիլիան կայսրի կինը) բէլգիական իշխանուհի էր:

ՄՇԱԿԻ ՀԵՈՒՍԳԻՐՆԵՐ

ՌՈՒՍԱՑ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹԻՒՆՅՑ

1 օգոստոսի

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ. Գերմալ Օրլով շարունակում է շարժումը դէպի Սիբիր, թողնելով իրաւորութիւնը բերդապահ զօրք: Կազանից Կեմարտ հասան երեք ամբերկական եւ ինն շիկական միսթեղներ:

ԼՈՐԵՆՑՈ-ՄԱՐԿԵԶԻ. Բօթները թողեցին Մախարաբորդի եւ ոյծով գրաւեցին Ալաւտովալը: Լուի Բոտայի բանակի վրանները եւ բաւակների նշանաւոր մար հրդեհից ոչնչացաւ Դէլմանտուայի մօտ:

ՀՈՒՍ. Երէկ խորին խաղաղութեան մէջ տեղի ունեցաւ Ումբերտո թագաւորի թաղումը Պանթէօնում:

ՄՈՍԿՎԱ. Վախճանից Վլադիմիր Սերգեյեւիչ Սոլովիէվ:

ՆԻՒԵՐՈՒ. Վախճանից չախմատիստ Ստէրնից:

ՀՈՒՍ. Յուլիսի 31-ին, Սալարիայի վրա, կամուրջի մօտ, Հոսից ութ կիլոմետր հեռու, երկաթուղական երկու գնացքների ընդհանրում տեղի ունեցաւ: Այդ գնացքներից մէկի մէջ գտնվող Մեծ Իշխան Պետր Նիկոլայեւիչ իր ամուսնու հետ անխնայ մնացին: Հասարակութեան մեծ բազմութեան հաւաքելու պատճառով, ստիպված եղան երկու գնացք դարկել Հոսի-Ֆլորէնցիա գծով՝ տասը րօպէի ընդմիջումով: Առաջին գնացքը Կաստէլ Ջուրիէպի մօտ կանգ առաւ, չորեկաւոր վառարկելու պատճառով, իսկ միւս գնացքը մօտեցաւ արագութեամբ, եւ տեղի ունեցաւ սարսափելի աղէտ: Թագաւորը եւ թագուհին ժամանեցին աղէտի տեղը առաւօտեան 3 ժամ 20 րօպէին: Թագուհին առաւօտեան 4 ժամին վերադարձաւ իր քրոջ՝ Մեծ Իշխանուհի Միլլիցա Նիկոլայեւիչի հետ միասին Կիլիմնալ: Թագաւորը Մեծ Իշխան Պետր Նիկոլայեւիչի հետ միասին մնաց աղէտի տեղում՝ օգնութիւն հասցնելու համար կարգադրութիւններ անելու: Նրանք Կիլիմնալ վերադարձան առաւօտեան 6 ժամին: Աւերակներից 12 մեռածներ են հանված եւ վիրաւորվածներ՝ մօտ 40 մարդ: Վառվածների անունները դեռ յայտնի չեն:

ՊԱՐԻՉ. Միսիստների խորհրդում Դէլկասե հաղորդեց Շանգհայի ֆրանսիական հիւպատոսի հետաքրքր, որի մէջ հիւպատոսը նորից երկու է յայտնում քաղաքի եւ չըջակների հանգստութեան մասին. Նախագահապետից միջոցներ, հարկաւոր դէպքում, ձեռք կանուխ ֆրանսիական ընկերութեան կողմից:

Յուլիսի 26-ին Տակուից ստացված հեռագիրը հաղորդում է, թէ համաձայնութիւնն արդէն կայացել է եւ վճարված է շարունակել արշաւանքը դէպի Պեկին: Մի ուրիշ հեռագիր Հնդկա-Չինի նահանգապետից, անգլիական աղբիւրից քաղելով հաղորդում է, թէ ազատաւոր զօրաբաժինը գտնվում է ընդամենը 25 կիլոմետր Պեկինից հեռու:

ԲԵՐԼԻՆ. Գերմանական «Գեֆիտ» նաւը յուլիսի 1-ից սկսած գտնվում է Շանգհայում գերմանական շահերը պաշտպանելու համար, «Իտալիա»-ը գտնվում է Շանգհայի ճանապարհին, իսկ «Շվաբլ» եւ «Չէլապ» հրաման են ստացել գնալու այնտեղ:

ՏԵՍԻՉԻՆ. Եւանձունի մօտ չինացիները դրաւել էին միայն երկաթուղային հողաթումբը եւ կարճատեւ գիծաբարութիւնից յետոյ՝ նահանգեցին դէպի Սիբիր: Պէճեանից ուղղակի նոյն տեղը փախան չինացիների գլխաւոր զօրքերը գեներալ Մայի եւ Չփիլի գեներալ-նահանգապետի հետ միասին:

ԼՈՆԴՈՆ. Բօթիկների խորհրդով Սոլսբերի ճանապարհ ընկաւ դէպի Վօգեզները, որտեղ կը մնայ մի ամիս եւ կը շարունակէ պարապել գործերով:

ՏԵՍԻՉԻՆ. Ինչպէս հաղորդում են Պեկինից, յուլիսի 20-ին կայսրուհին մի քանի օրվայ ուտելիղէնի պաշար ուղարկեց գեներալներին: Լիպինգի երկու թղթաւորութիւնները դրեց քաղաքային պատի վրա՝ դեպքանաւորների մօտ եւ երկու օր ունակեցին ու գնդակահարում էր դեպքանաւորները:

ՀՈՆԿՈՆԳ. Յուլիսի 30-ին 8000 ռուս զօրակները՝ այդ օրը ճանապարհ ընկան դէպի Պեկին: Տինտոյեյն ծովապետը Իւննանից հրամատարացաւ 10,000 զօրք ուղարկել Պեկին:

ՏԵՍԻՉԻՆ. Յուլիսի 30-ին, չաբաթ օրը, կէսօրին, դաշակիցները գտնվում էին 60 մղոն Պեկինից հեռու: Անգլիական կառավարութիւնը Վուլուանի փոխարքային տուեց 75,000 ֆ. ստէրլինգ 1/2-ով՝ այդ գումարը հարկաւոր էր նրա նահանգի զօրքերին ուժիկ վճարելու համար:

ԲԵՐԼԻՆ. Բօթի պատգամաւորները՝ Ֆիլիքս

Վէլս, Վէլսարան, զօկտօր Լէյդս եւ զնապա-
նատան ջարտողար Գիւլին ճանապարհ ընկան
գէպի Պետերբուրգ:

2 օգոստոսի

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ. Հրատարակված է Բարձրա-
գոյն հրաման. «Կարմիր-Նաչի ընկերութեան
նիւթական միջոցներն ընդարձակու համար ներ-
կայ հանգամանքներում հարկաւոր համարվեց
ժամանակաւոր տուրք սահմանել արտասահմա-
նեան անցագրերից. այսինքն, բացի 10 րուբլի
վճարից՝ վերցնել յօդուտ Կարմիր-Նաչի ընկե-
րութեան նաեւ 5 րուբլի իւրաքանչիւր կիսա-
մեակուծ: Հրատարակված է կառավարչական
հաղորդագրութիւն, որի մէջ գերմանական
ֆէլդմարշալ կոմս Վալդէրիգէէին Ձինաստա-
նում գտնվող զորքերի գլխաւոր հրամա-
նատար ընտրելու վերաբերմամբ՝ յայտնե-
րված է ուսուց կառավարութեան համա-
ձայնութիւնը: Այդ հաղորդագրութիւնը վեր-
ջանում է հետեւեալ խօսքերով. «Բայց եւ
այնպէս, չը պէտք է աչքից բաց թողնել, որ
համաձայնելով ուսուց զորաւորութիւնը ենթարկել
գերմանական ֆէլդմարշալին հրամանատարու-
թեանը, Թագաւոր Կայսրը մտադիր չէ ոչ մի
կերպով հրաժարվել այն քաղաքական ծրա-
գրից, որի հիմնական սկզբունքների վերաբեր-
մամբ լիակատար համաձայնութիւն է կայացել
ինչպէս Յրանախի, այնպէս էլ միւս պետու-
թիւնների հետ, առանց ձգուելու շահախնդրական
նպատակների, աշխատելով վերականգնել ընդ-
հանուր խաղաղութիւնը եւ բարեկամական յա-
րաբերութիւնները հարեւան Ձինաստանի հետ:
Ռուսաստանը հաւատարմ կը մնայ իր պատ-
մական աւանդութիւններին, եւ եթէ Ձինաս-
տանում անկարգութիւնների շարունակութիւն-
ը անհրաժեշտ դարձնէ ձեռք առնել աւելի
վճարական պատերազմական գործողութիւն-
ներ՝ նա առանց չեղելու կը հետեւի այն
մարդասիրական աւանդներին, որոնք հին օրե-
րից սկսած եւ ամեն ժամանակ կազմել են ուս-
ուց զորքի փառքը:

ԼՕՆԴՈՆ. Բորսերու հետադրում է Պրետո-
րիայից, յուլիսի 31-ից, թէ Մէտուէն եւ Կիտ-
չենի դեռ եւս զբաղված են Դէվէտին հաղածե-
լով Կիտչենի հետադրում է օգոստոսի 1-ին
Սպորլլատից, թէ անցեալ գիշեր Դէվէտ պա-
թեցից երեք հատը իր սպիւրից: 60 գիւրի
անգլիացիներ եւ մի օֆիցէր, որոնք փախան
նրա ընտանիք, պատմում են, որ Շուէյն գրկված
է ընտանիք հետապնդու իրաւունքից եւ գտն-
վում է հսկողութեան տակ: Դէվէտ ստիպված
էր դէն ձգել իր ուղղամիտները պաշարի մի
մասը եւ 30 բոլորովին ուժաւոր ձիեր: Գե-
րիները հատաւորում են այն տեղեկութիւնը,
թէ Մէտուէն մի թնդանօթ է առել Դէվէտից:
Երեկ աշտուղութեամբ ստանդարտով էինք թշա-
մու գլխաւոր ոյժերը Բուլլերի արշաւանքը
դէպի հիւսիս գերազանց հետեւանքներ ունե-
ցաւ—անձնատուր եղան մի ֆէլդլորնէտ եւ
182 զինուորներ Ստանդերտօնի զորաւորմանց:

Կ. ՊՕԼԻՍ. Վանի անգլիական փոխ-հիւպա-
տոր հաղորդում է, թէ վրլայթթում ճանա-
պարհորդելիս ենթաւորվեց զինուորական քրդե-
րի յարձակմանը, որի ժամանակ վրլայթթեց
թարգմանը, իսկ ճանապարհորդական իրեղէն-
ները կողոպտվեցին: Երբ նա այդ մասին իմաց
ստուցել իշխանութիւններին՝ նրանք զօրքեր ու-
ղարկեցին քրդերին հալածելու: Անգլիական
հիւպատոսը Բ. Դոանը ներկայացրած յայտա-
գրով պահանջում է պատժել յանցաւորներին
եւ վերադարձնել յախառկված իրեղէնները:

Խմբագիր՝ ԱԼԷԿՍԱՆԴՐ ԲԱԼԱՆԹԱՐ
Հրատարակիչներ՝ ԹԱԳՈՒՆԻ ՏԻԳՐԱՆԵԱՆ
ԻՍԱՀԱԿ ՄԷԼԻԲ-ԱԼԱՄԱՆԵԱՆ

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

ԱՌԱՋԻՆ ՄԱՍՆԱՌՈՐ ՀԻՄՆԻԿԱՆՈՑ

Բ. ՆԱԽԱՍԱՐԳԻԱՆԻ

(Կուլիս, Վօրոնցովի արձանի հանդէպ)

ա մ ե գ օ ր, բ ա ց ի կ ի ր ա կ ի օ ր ե ի ց:

Ա Ռ Ա Ռ Տ Ն Ե Ր Ը

Բ. Ա. Նախասարգիան—11—12 ժ. վերաբուժու-
թեան, վերականգն (սիֆիլիս) եւ միզառն. հիւանդ.

Կ. Մ. Ձիկովանի—9—10 ժ. աչքի, ներքին եւ
ներարկային:

Բ. Յ. Պրոսպանի—12—1 ժ. ակաւի, քիմի, կա-
կոր դի եւ կրծքի:

Ջ. Բ. Բաբանասեան—11—12 ժ. կանանց եւ երե-
խայից հիւանդ.

Ա. Կ. Կարապետեան—1—1/2 ժ. ներքին եւ երե-
խայից:

Ե Ր Ե Վ Ո Ն Ե Ր Ը

Բ. Յ. Պրոսպանի—6—7 ժ.

Բ. Ա. Նախասարգիան—7/8—8 ժ.

Վար 50 Կ. քթաբերքի ճիւղ համախորդի (կոն-
սիլիսի) եւ օպերացիայի համար առանձին:

Օ. Տ. Ավանիսիան—առան. ծաղիկահտ եւ բժշ-
կական մարմնամարզ. գիւլի 11—1 ժ.

Հիւանդանոցի վերատեսուչ՝

Բժոկապետ ՆԱԽԱՍԱՐԳԻԱՆ

ՄԱՆԿԱԿԱՆ ՊԱՐՏԷԶ

ՈՒՍՈՒՄՆԱՐԱՆ ԵՒ ՊԱՆՍԻՕՆ

Ս. ՊԵՏՐՈՍԵԱՆԻ

Բ Ա Գ Ի Ո Ւ Մ

Ընդունվում են երեխաներ եւ պատրաստվում
օրիորդաց եւ տղայաց գիմնազիայի, բէլական
դպրոցի եւ այլ ուսումնարանների համար:

Մանկական պարտէզի նպատակն է կրթել
երեխաներին (4—7 տարեկ.) ֆիզիկական սիս-
տեմով: Ընդունվում են գիշերօթիկ եւ կիսա-
գիշերօթիկ երեխաներ: Մանկական պարտէզի
եւ ուսումնարանի մանրամասն ծրագիրը կա-
րել է ստանալ օգոստոսի 20-ից, Բագուում:

1—3

Շուշու ՀԱՅՈՑ ՀՈԳԵՒՈՐ ԹԵՄԱԿԱՆ

ԴՊՐՈՑԻ հոգաբարձութիւնը

հրաւիրում է տեսուչ՝ մինչեւ 2000 րուբլի ուս-
մանով եւ 12 դասով ծանակցողները պէտք է
գիմն հոգաբարձութեան հետադրով:

Հոգաբարձութեան նախագահ՝

1—2 Վահան քահանայ Շահունեանց

ԱՐԴԱՆՈՒՅԻ ԾԵԱԿԱՆ ԴՊՐՈՑԻ ՀԱՄԱՐ

հարկաւոր են

ՈՒՍՈՒՑԻՑ ԵՒ ՈՒՍՈՒՑՈՒՆԻ

(Գերադասելի են ամուսնները): Պայմանների
համար դիմել՝ Михайловская, № 177, Կարա-
պետ Ռոստակեանին:

6—10

ԹԻՖԼԻՍԻ ԲԱՆԱԲԱՅԻՆ ՎԱՐՁՈՒԹԻՒՆԸ

սրանով յայտարարում է այն անձերին, որոնք
ինչպէս են տուել վարչութեան քաղաքային հոգ
կազմով վերցնելու վերաբերմամբ, թէ համա-
ձայն քաղաքային խորհրդի որոշման, որ կա-
յացել է 1900 թ. յունիսի 12-ին, կապով
են արվում 10-րորդ քաղաքամասում, «Էօրկիս-
Գորա» անուանված տեղում, 47 հոգաբարձիներ
արտօնական իրաւունքի հետեւեալ կարգով:

ա) Հարկատու անձերին, որոնք գրված են
Թիֆլիսի քաղաքացի, որպէս հարկերը տալու
վերաբերմամբ, այնպէս էլ միայն հաշի համար
(պաշտօնաթղթով զինուորները):

բ) Մնացեալ դասակարգերի անդամներին,
որոնք ապրում են Թիֆլիս քաղաքում հինգ
տարուց ոչ պակաս:

գ) Օտարապետներին, որոնք ապրում են
Թիֆլիսում ոչ պակաս, քան ինն տարի:

Հոգաբարձիները կապով վերցնել ջանկա-
ցողները պարտաւոր են ներկայացնել քաղա-
քային վարչութեանը կարեւոր փաստաթղթեր՝
իրանց իրաւունքներն ապացուցողով համար
մինչեւ 1900 թ. օգոստոսի 10-ը:

3—3

Լ յ յ ա տ ե ս ա լ

ԱՐԴԱՐ ԾԵՐՈՒՆԻ

Վ. ՀԻԻԳՈՅԻ

Թարգմ. Ս. Միխայիլեան

Գիշին է 15 կօպէկ:

Դիմել—Տիֆլիս, Կոնորա Օմեստա Իզդանա Բր-
մանիէ կնիգ (Дорисмеляковская № 11) կամ
Tiflis (Russie) Société de la publication des livres
arméniens. Ընկերութեան անդամ լինելու համար
վճարում են տարեկան 6 րուբլի եւ ստանում 8 րուբ-
լու գրքեր: Ընկերութեան գրասենեակում վաճառվում
են ընկերութեան գրքերը ծանակցողներին ձրի ու-
ղարկվում է գրացուցակ:

3—5

Ներսիսեան հոգեւոր դպրոցի վարչութիւնը
սրանով յայտարարում է, որ նորից ա-
շակերտների ըննութիւնները սկսվելու են օ-
գոստոսի 30-ին: Նորից աշակերտները պար-
տաւոր են ներկայացնել ծննդեան վկայական
(խակական եւ ոչ քաղաքացի) եւ ծաղկի պա-
տուաստման վկայական: Առանց վկայականնե-
րի նորից աշակերտները ըննութեան չեն են-
թարկվի:

Տեսուչ՝ Ս. Բաղդեան

Վ ա ճ ա ո Վ ո լ մ է

ԲԺ. Ա. ԲՈՒԴՈՒՂԵԱՆԻ

„ՄԵՐ ՆԵԱՐԴԵՐԸ“

12+109=121 երես գիրը 10 կօպ.

Պատկաւոր Տիֆլիս, տիպոգրաֆ Ե. Մար-
րոսյանց.

(չ. հ.) 2—2

ԹԻՓԼԻՍԻ ԺՈՂՈՎԱՐԵՆ

Հին գաւաթի, օգոստոսի 3-ին

պ.պ. անդամներին, կանգնողներին եւ նրանց
ընտանիքներին համար հայոց զրաւատիկական
ընկերութիւնը կը ներկայացնէ

ԱՅՔԵԶ ԱՊԱՀԱՐԶԱՆ

Կօմ. 3 գործ. հեղ. Մարո, Թարգ. Ա. Թարխա-
նեանի:

Տեղերի գինը 30 կօպ.—1 ր.: Հիւրերը վճա-
րում են մուտքի համար 50 կօպ.:

Սկիզբն է երկուշաբթի 8¹/₂ ժամին:

Ներկայացումից յետոյ կը լինեն պարեր:

2—2

Ս Ո Ւ Ր Ա Մ

Նրանք, որոնք ցանկանում են ձեռք բերել
կրակին զինացող կաւ եւ կաղապար ձու-
լելու աւազ, կարող են դիմել Սուրմա՝ ա-
ւազ քահանայ էյիզովին:

2—2

BATEAUX A VAPEUR FRANCAIS N. PAQUET ET C-ie

ՖՐԱՆՍԻԱԿԱՆ ՆԱԽԱԳԱՑՈՒԹԵԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ

Ն. ՊԱԿԷ ԵՒ ԸՆԿ.

Կանոնաւոր եւ ուղղակի նաւագնացութիւն ՄԱՐՍԷԼԻՑ ԲԱՌՈՒՄ, չորեքշաբթի օրերը, երկու
շաբաթը մի անգամ:

Եւ հակառակը Բաթումից Մարսէլ, մտնելով Տրապիզոն, Սամսոն եւ Պոլիս: Մեկնում է
Բաթումից չորեքշաբթի, 2¹/₁₆ օգոստոսի ԱՆՏՈԼԻ չորեքշաբթի, հաւաքեալ ԲԻՆԱԿԻ: Եւ այս-
պէս շարունակաբար, երկու շաբաթը մի անգամ, չորեքշաբթի օրերը, ժամը 4-ին ճաշից յետոյ:
Բաթումից Պարիզ ուղղակի հաղորդակցութեան տոմսակնետ տրվում են սովորականից
պակաս գներով:

Ամիսը մի անգամ կանոնաւոր հաղորդակցութիւն Բաթումի եւ Անադոլայէն մէջ, ընդու-
նելով ապրանքներ բոլոր հիւսիսային նաւահանգիստներին համար:

Ապրանքների եւ ճանապարհորդների մասին հարկաւոր տեղեկութիւններ ստանալու հա-
մար թող բարեհաճեն դիմել ընկերութեան գործակալներին:

ԲԱՌՈՒՄԻՄ—պ. Վիկտօր ԳԱՐՍՅՈՒՆ, Նաբէլէժնայա: ԹԻՖԼԻՍԻՄ—պ. Օ. Գ. Բարե-
կնդանեանին, Սիւնի փող. խօշտիպարութիւն եւ Մայսուրաձէի քարվանսարա: ԲԱԳՈՒ—Եղբ.
Վ. եւ Ի. Մուսթաֆաներին, Նաբէլէժնայա փողոց, տուն Կրասինիկովի, № 27: ՆՈՎՈՐՈՍՍ-
ՍԻՅԱՎ—Վաղիկաւազի երկաթուղու առեւտրական գործակալութիւն: Ե. չ. Գ. 15—20

ՈՒՍՈՒՄՆԱՐԱՆ ԵՒ ՊԱՆՍԻՕՆ

Ա. ՏԵՐ-ՅԱԿՈՎԵԱՆԻ

ՊԱՆՍԻՕՆԸ ԱՄԱՌԸ ԳՏԵՎՈՒՄ ԵՒ ԲՈՐԺՈՒՄ ԱՄԱՐԱՆՈՑՈՒՄ, ԻՍԿ ԲԱՍԱՆՈՒՆ-
ԲԸ ԹԻՖԼԻՍԻՄ: Թէ Բորժում եւ թէ Թիֆլիսում ընդունում է աշակերտներ,
պատրաստում է գիմնազիական եւ պարտական կօրպուսի, զեմլէմէրնե-
րի, բէլական, առեւտրական եւ այլ ուսումնարաններին համար:

Ուսումնարանում ուսուցանում են բարձրագոյն ուսումնական աւար-
տած մասնագէտներ, գիմնազիական ուսուցիչներ: Աւանդելի առարկա-
ներն են՝ կրօն, ուսուց, հայոց, ֆրանսիական, գերմանական, լատինական, յունաց,
վրաց լեզուներ, թուրքական, ալգերա, երկրաչափութիւն, աշխարհագրութիւն,
պատմութիւն (ուսուց եւ ընդհանուր), բնական գիտութիւն, նկարչութիւն, գրու-
թիւն, երգեցողութիւն, երաժշտութիւն:

Նոյնտեղ ընդունվում են ԱՇԿԵՐՏՈՒՆԻՆԵՐ: Օրարաքաղաքացիների համար կան
ամենայն յարմարութիւններ:

Հասցէն. ВОРЖОМЪ. Гротовская ул., ПАНСИОНЪ ТЕРЪ-АКОПВА. ТИФ-
ЛИСЪ, Гановская ул. № 11. 9—10

Лучшія аттестаціи отъ учебнаго начальства.

И. Я. БРОНЪ-ФОНЪ-БРЕННЕРЪ.

преподасть

Полный курсъ БУХГАЛТЕРІИ

ПРЕДМЕТЫ ЗАНЯТІЙ:

1) Бухгалтерія (двойная итальянская), 2) Коммерческая арифметика,
3) Коммерческая экономія, 4) Арифметика на счетахъ, 5) Торговья и
вексельныя законенія и 6) Коммерческая корреспонденція.


Курсъ 3-хъ-мѣсячный. Занятія ежедневныя. Плата за курсъ 60 руб. Ручатель-
ство и гарантія за успѣхи. Болѣе 1000 окончившихъ курсъ. Михайловская, № 71.

Собственный методъ преподаванія по собственнымъ сочиненіямъ, продающимся
во всѣхъ книжныхъ магазинахъ.

Начало занятій съ каждаго перваго числа мѣсяца. 8—20

Годъ занятій одиннадцатый.

ԱՄԵՆԱՑՈՅՆԻ ԳՈՐԾԱՐԱՆՆԵՐԻ




Բ Օ Յ Ե Ա Ն Ե Ր



Դ Ա Շ Ն Ա Մ ՈՒ Ր Ն Ե Ր



ՅԻՍ-ՀԱՐՄՈՆԻՈՒՄՆԵՐ, ՋՈՒԹԱԿՆԵՐ, ԿԻ-
ԹԱՌՆԵՐ, ՖԼԵՏՆԵՐ, ՎԼԱՐՆԵՏՆԵՐ, ՉԱՌ-
ՆԱԼԱՋԵՐ, ԼԱՐՆԵՐ, ԵՒ ԱՅԼՆ, ԵՒ ԱՅԼՆ:



Բոլոր տեսակ գործիքների համար գի-
նը կարելի է վճարել մաս-մաս:

ՊՐԵՏԵՍԿԱՆՆԵՐՆԵՐ
ուղարկվում է ձրի:

ԵՐԱԺՇԱԿԱՆ ԳՈՐԾԻՔՆԵՐԻ ԵՒ ՉԱՆԱ-
ԻՍՋԵՐԻ ԿՈՎԱԿԱՆՆԵՐՆԵՐՆԵՐԻ ԵՒ ՉԱՆԱ-
ԻՍՋԵՐԻ ԿՈՎԱԿԱՆՆԵՐՆԵՐՆԵՐԻ ԵՒ ՉԱՆԱ-

Դ Ե Պ Օ

Բ. Մ. ՄԻՐԻՄԱՆԵԱՆԻ

Մատակարար Կայսերական Երաժշտական
Ընկերութեան

Музыкальное депо Б. М. Мириманяна,
ТИФЛИСЪ.

Дворцовая ул., д. Т. Д. 3. Банка. 13—20

Երկրորդ տպագրութեամբ լոյս տեսաւ.

ՆՇՈՏ ԵՐԿԱԹ

պատմական վէպը (երկու մասը մի գրքի մէջ):
Գիշին է մէկ րուբլի, գումարով գնողներին դի-
ջուսին: Դիմել կենտրոնական գրախանութանցին
կամ հեղինակին՝ Տիֆլիս, Дворянская улица
№ 6, Ваграту Айвазянцу. 4—5



ՊԻՓԼԻՍԻՆԻ

ՆՈՐ ՄԻՋՈՑ

մ